ՈՐՈՇՈՒՄ N 5

29 ապրիլի 2015 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.1. կետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Երևանի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:

2. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին հանձնարարել Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Երևանի պետական համալսարանի ռեկտորի ընտրությունն անցկացնել 2015թ. հունիսի 19-ին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Ս. Սարգսյան**